լուսանկարչաց տարաձայնութիւնն ոչ այլ ինչ պատճառէ յառաջ եկած էր, բաց եթէ սխալ հասկացումէ իրարու մտաց, և որ օր աւուր վերայ զգալով կ'աներևութանայ, արուեստաւորք ի ձեռն լուսանկարի կատարելով իրենց գլուխ գործոցն, ինչպէս որ ի ձեռն տպագրութեան կատարած են մեծամեծ խոհուն և գրող հեղինակք։

Պ. Լարրումէի յաջորդեցին խօսելու հետևաբար Պ. Դաւան'ի կողմանէ Լուսանկարչաց ընկերութեան. և յետոյ Պ. Լեւոն Վիդալ յանուն Լուսագրական տպագրութեան, որոյ ներկայացուցիչն էր, քանից բաժակը վասն վարչութեան, գովելով նորա ջանքն վասն զարգացման լուսանկարի արուեստի, ընդ նմին նաև ուրուագրութեան. և աւարտեց իրեն խօսքը յիշատակելով և յորդորելով զարգմանանն ըմպել բաժակ մի ևս ի կենդանութիւն և յառողջութիւն Պ. Պելիկիոյի, որ հանդիսին պատուոյ նախագահն էր, և նոյն ժամանակ կարող չէր եղած գալ ի հանդէսն հիւանդութեան պատճառաւ։

Յետ որոց ելելով Պ. Կիլդէն, անդամ Ստոքհոլմի Ուսումնականաց ճեմարանին, պատասխանեց ի դիմաց ամենայն օտարազգի հիւրոց Պ. Յանսենի բաժակին համար, ըսելով որ գաղղիական հանդէս մը համազգային հանդէս մ'է, Գաղղիա բովանդակ աշխարհի սիրտը լինելուն պատճառաւ։

Այս մաղթանաց և բաժակաց յաջորդեցին բանաստեղծական ոտանաւոր քերթուածք։ Բոլոր սեղանի միջոց սրահէն դուրս երաժշտութիւն կը հնչէր։ Ուրախութիւնն շատ երկայն տևեց, մինչև անցնելով նաև կէս գիշերը, հանդիսականաց թիւն չատ բազմաթիւ էր, և մասնաւորապէս Պ. Էտիսըն, որ չատ գոհ էր այսպիսի համակրական ընդունելութեան մը համար՝ զոր ըրաւ իրեն գաղղիական ազգը։

Երկրիս ներքին տաքութիւնն։ — Սովորաբար կարծուի որ որչափ աւելի խոր կամ վար իջուի երկրի տակ, այնչափ աւելի կ'ըլլայ տաքութեան աստիճանն. այլ մտերս Բրուսիոյ հանքաց ոստիկանն Հիյսէն (Huyssen) նշանակեց, որ Պեռլինու մօտ Սբեւենպէրկի (Spevenberg) ծակուածին 3490 անգղիական ոտք խորութեան մէջ տաքութեան աստիճանն էր 107, 6° Հարիւրամասն ջերմաչափով, Սէքէն Վիցի (Seckenwitz) 3555' խորութեան՝ 94, 5°. Շլատէպախի (Schladebach) 5735' խորութեան՝ 134°. Այս չափերէս կը հետեւցընէ գիտնականն՝ թէ տաքութեան աւելնալն անկախ է խորութեան չափէն, և երկրաչափական կամ թուաբանական հաստատ համեմատութեան տակ չընկնար։

Մատեանք Եւկլիդեայ. — Այս մօտ ժամանակներս Հնդկաստանի մէջ կարևոր գիւտ մ'եղաւ. այսինքն է, Եւկլիդեայ գրքերն՝ որք ցարդ կորսուած կը համարուէին, բաց 'ի քանի մի պատառիկներէ՝ որոց հայերէն թարգմանութիւնն մասամբ 'ի լոյս ընծայեցաւ Բազմավէպ Հանդիսարանի մէջ, գտնուեցաւ արդ 'ի Ժէյփոր անոնց թարգմանութիւնն 'ի Սանսքրիթ լեզու։ Եէքուար իշխանին զրկած նուիրակ մը։ Պ. Դէրուվա, այս նիւթոյս նկատմամբ յատուկ գրութիւն մը ներկայացուց Արևելագիտաց ութերորդ համազգային ժողովոյն՝ որ գումարեցաւ 'ի Ստոքհոլմ։

digitised by A.R.A.R.@